## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 68

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 03-ը հուլիսի 2020 թվականի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 03 հուլիսի 2020 թվականի թիվ 8 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի բնակիչներ Աննա Հարությունյանին և Թագուհի Անտոնյանին դրամական օգնություն հատկացնելուն համաձայնություն տալու և գումարների չափը սահմանելու մասին

3. Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2020թվականի երկրորդ եռամսյակի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին,

4. 01.04.2020-30.06.2020թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին

5. Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին,

6. Արենի համայնքի ավագանու 14.05.2020թվականի թիվ 47 որոշումը անվավեր ճանաչելու մասին,

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Ֆորդ Տրանզիտ մակնիշի 823LL70 պետհամարանիշի ուղևորատար միկրոավտոբուսով Արենի համայնքի բնակավայրերից դեպի մարզկենտրոն և հակառակ ուղղություններով անվճար

կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելուն համաձայնություն տալու, երթուղու օրերը և ժամերը հաստատելու և վարորդի աշխատավարձի չափը սահմանելու մասին,

8. Արենի համայնքի ավագանու 04.06.2020թվականի թիվ 62 և թիվ 66 որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին

9. Արենի համայնքի Արենի բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելուն և 0.05697հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին,

10. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.16428հա և 0.15621հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 69

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԹԱԳՈՒՀԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Աննա Հարությունյանին դրամական օգնություն հատկացնելուն և սահմանել օգնության գումարի չափը՝ 70 000 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Թագուհի Անտոնյանին դրամական օգնություն հատկացնելուն և սահմանել օգնության գումարի չափը՝ 40 000 ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 70

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է***

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2020 թվականի երկրորդ եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված

Արենի համայնքի ավագանու 2020թ-ի
հուլիսի 3-ի թիվ 70 որոշման

II եռամսյակ

**Եկամտային մաս.**

հազար դրամ

| **Եկամտատեսակ** | Նախատեսված /I Կիսամյակ/ | Կատարողական /I Կիսամյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 4444,8 | 4060,6 | 91,4 |
| Գույքահարկ | 15507,5 | 16445,5 | 106,0 |
| Տեղական տուրքեր | 1457,9 | 2192,4 | 150,4 |
| ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 4375,4 | 5228,7 | 119,5 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 136655,8 | 136655,8 | 100,0 |
| Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 6201,1 | 6201,1 | 100,0 |
| **Այլ եկամուտներ**/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 7999,0 | 15099,1 | 188,8 |
| **Ընդամենը** | **176641,5** | **185883,1** | **105,2** |

| **Ծախսային մաս** | Նախատեսված /I Կիսամյակ/ | Կատարողական /I Կիսամյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 60000,0 | 56347,1 | 93,9 |
| Պարգևատրումներ | - | - | - |
| Էներգետիկ ծառայություններ | 9000,0 | 8284,4 | 92,0 |
| Կոմունալ ծառայություններ | 850,0 | 802,5 | 94,4 |
| Կապի ծառայություններ | 700,0 | 667,9 | 95,4 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 100,0 | 37,4 | 37,4 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 12000,0 | 10261,4 | 85,5 |
| Դրամաշնորհներ | 40000,0 | 38249,9 | 95,6 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 7000,0 | 6950,5 | 99,3 |
| Այլ ծախսեր | 900,0 | 820,2 | 91,1 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | - | - | - |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 15000,0 | 14637,0 | 97,6 |
| **Ընդամենը** | **145550,0** | **137058,3** | **94,2** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 71

01.04.2020-30.06.2020ԹԹ. ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԵՆԻ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին **որոշում է՝**

01.04.2020-30.06.2020թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 3 էջից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված

Արենի համայնքի
ավագանու 2020թ-ի
հուլիսի 3-ի թիվ 71 որոշման

<<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ 2020թ.

***2020թ ապրիլի 1-ից հունիսի 30-ը կատարված աշխատանքներ***

առ 30.06.2020 դրությամբ

| h/h | Աշխատավարձ | գումարը |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | **9 183 202** |
| | Ընդամենը | **9 183 202** |
| *h/h* | *Կատարած աշխատանքները* | Գումարը |
| | Ագարակաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | |
| 2 | Ագարակաձոր բնակավայրում ,,Բոլորաբերդ,, հանդամասում խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ | 89 500,0 |
| 3 | 90գծմ հին երկաթյա խողովակների ապամոնտաժում | 205 680,0 |
| 4 | 3-րդ փողոցի ճամփեզրյա հենապատի վերակառուցում | 121 800,0 |
| Ընդամենը | | **416 980** |
| | Աղավնաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | |
| 5 | փողոցային լույսերի լամպերի փոխարինման համար վերամբարձ տրակտորի աշխատանքներ | 23 700,0 |
| 6 | Աղբավայրի մաքրում | 14 240,0 |
| 7 | Հանդամիջյան ճանապարհների գրեյդերով մաքրման աշխատանքներ | 80 420,0 |
| 8 | 1-ին փողոցի խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ | 22 000,0 |
| 9 | Մինի ֆուտբոլի դաշտի շրջակայքի բարեկարգման աշխատանքներ | 191 360,0 |
| 10 | Ոռոգման ջրի խողովակաշարի ապամոնտաժման, պահեստավորման և մասնակի վերանորոգման աշխատանքներ | 87 120,0 |
| 11 | 200 գծմ ոռոգման ջրագծի հիմնանորոգում /նախ. Արժեք/ | 749 190,0 |
| *Ընդամենը.* | | ***1 168 030*** |
| | Արենի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | |
| 12 | Նորավանքի ձորից սնվող խմելու ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքներ | 750 600,0 |

| | | |
|---|---|---|
| 13 | ,,Իշխանի առու,, ոռոգման մայր առվի մասնակի վերանորոգման աշխատանքներ | 686 400,0 |
| 14 | Հանդամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքներ գրեյդերով | 49 280,0 |
| 15 | ոռոգման մայր առուների 3 վթարված հատվածների և դղլայի առու ջրատարի մայր առվի վերանորոգման աշխատանքներ | 542 000,0 |
| 16 | ոռոգման մայր առուների մաքրում էքսկավատորով | 293 200,0 |
| Ընդամենը | | ***2 321 480*** |
| Ելփին բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 17 | ոռոգման ջրագծի վերակառուցման աշխատանքներ | 156 240,0 |
| 18 | Չիվա բնակավայրից խողովակաշարի մասնակի ապամոնտաժում և տեղափոխում | 45 000,0 |
| 19 | աղբավայրի մաքրում | 28 120,0 |
| 20 | Ոռոգման ջրատարի վրա մետաղյա ջրարգելակի պատրաստում և տեղադրում | 90 570,0 |
| 21 | Հովվի տնակի մետաղական դռների և պատուհանների կառուցման աշխատանքներ | 133 550,0 |
| 22 | Հանդամիջյան ճանապարհների մաքրման և բարեկարգման աշխատանքներ | 33 060,0 |
| 23 | 2 հատ ջրախմոցի տեղադրման աշխատանքներ | 476 610,0 |
| 24 | Հանդամիջյան ճանապարհների գրեյդերով մաքրման աշխատանքներ | 33 060,0 |
| 25 | Ջրանց խողովակների տեղադրում /նախ. Արժեք/ | 70 960,0 |
| Ընդամենը | | ***1 067 170*** |
| Խաչիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 26 | Ջրամբարի մաքրման հետևանքով հողերի հարթեցման համար ԴՏ տրակտորի աշխատանքներ | 294 540,0 |
| 27 | Ներհամայնքային ճանապարհների մաքրման աշխատանքներ | 96 280,0 |
| 28 | ,,Տախտակներ,, կոչվող տարածքում ոռոգման ջրի խողովակաշարի ապամոնտաժման աշխատանքներ | 257 600,0 |
| 29 | 4-հատ ջրախմոցի պատրաստման աշխատանքներ | 110 000,0 |
| 30 | Հանդամիջյան ճանապարհների գրեյդերով մաքրման աշխատանքներ | 134 250,0 |

| | | |
|---|---|---|
| 31 | Փողոցային լուսավորության անցկացում | 993 540,0 |
| *Ընդամենը* | | ***1 886 210*** |
| Չիվա բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 32 | Կոյուղու դիտահորերի վերանորոգում | 32 600,0 |
| 33 | Համայնքային ճանապարհների գրեյդերով մաքրման աշխատանքներ | 24 640,0 |
| 34 | ,,Կալերից վերև,, ոռոգման խողովակաշարի վրա փականների տեղադրում | 215 000,0 |
| 35 | 10-րդ փողոցում 100գծմ երկարությամբ ջրահեռացման առուների մաքրման աշխատանքեր և 50 գծմ խմելու ջրի խողովակի փոխարինում | 39 000,0 |
| 36 | ոռոգման առուների մաքրում էքսկավատորով | 309 760,0 |
| *Ընդամենը* | | **621 000** |
| Գնիշիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 37 | Գնիշիկ-Խաչիկ ճանապարհահատվածի 2-րդ կմ-ի վրա 30 գծմ ճանապարհի վերանորոգման և լայնացման աշխատանքներ | 17800,0 |
| *Ընդամենը* | | **17800,0** |
| Ռինդ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 38 | 14-րդ փողոցում խմելու ջրի վթարի վերականգնում | 42 800,0 |
| Ընդամենը | | **42 800,0** |
| Արփի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2020**թ կատարված աշխատանքներ | | |
| 39 | Արփի բնակավայրի 5-րդ փողոց 2-րդ նրբանց հասցեում սելավատարի մաքրման աշխատանքներ | 22 000,0 |
| 40 | Պալմետա հանդամասում ջրահեռացման խողովակների բետոնացում/նախ.արժ/ | 159 080,0 |
| Ընդամենը | | **181 080,0** |
| Ընդամենը կատ աշխատանքներ | | **7 722 550** |
| *Ընդամենը (աշխատավարձ + կատարված աշխատանքներ)* | | ***16 905 752*** |

ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝ Ս. Սիմոնյան

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 72-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և ,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասինե ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն.

1) Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ Արենի այլ ոչ հարկային եկամուտներ գործառնական դասակարգման 28 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 7 198 760 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

ա) Արենիի համայնքապետարանի կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01բաժնի, 01խմբի, 01դասի 4269 / Հատուկ նպատակային այլ նյութեր / հոդվածին 400 000 ՀՀ դրամ, 4822 /Այլ հարկեր/ հոդվածին՝ 100 000 ՀՀ դրամ,

բ) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4241/ Մասնագիտական ծառայություններ / հոդվածին 2 000 000 ՀՀ դրամ, 4267 /Կենցաղային և հանրային սննդի նյութեր / հոդվածին՝ 198 760 ՀՀ դրամ,

գ) Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին՝ 2 000 000 ՀՀ դրամ,

դ) Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառական դասակարգման 11 բաժնի 01խմբի 02 դասի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին 2 500 000 ՀՀ դրամ,

2) Արենիի համայնքապետարանի ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի, 05 խմբի, 01 դասի 4637 /ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածից պակասեցնել 1 000 000 ՀՀ դրամ և ուղղել ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին,

3) Արենիի համայնքապետարանի հողի օտարումից մուտքեր եկամտատեսակում ավելացնել 35 000 000 ՀՀ դրամ և ուղղել.

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134 /Նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին 3 000 000 ՀՀ դրամ,

բ) Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին 12 000 000 ՀՀ դրամ,

գ) Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին՝ 20 000 000 ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՂԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 73

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.05.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 47 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 38-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Անվավեր ճանաչել Արենի համայնքի ավագանու 14.05.2020 թվականի <<Արենի համայնքի վարչական տարածքում հանքարդյունահանման գործունեություն իրականացնող <<Վայոց Ձոր Ֆրուկտ >> ՍՊԸ-ի տնօրեն Մեխակ Եղիազարյանի կողմից հողամասի վարձակալության պայմանագրի <<4.4.7>> կետով նախատեսված վճարվելիք գումարներից մեկ միլիոն ՀՀ դրամ գումարի փոխարեն 3000լիտր դիզելային վառելիք տրամադրելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 47 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 74

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖՈՐԴ ՏՐԱՆԶԻՏ ՄԱԿՆԻՇԻ 823LL70 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴԵՊԻ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՎՃԱՐ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԹՈՒՂՈՒ ՕՐԵՐԸ ԵՎ ԺԱՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՐԴԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.07.2020թվականի թիվ 01/07.4/4175-2020 գրությունը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ֆորդ Տրանզիտ մակնիշի 823LL70 պետհամարանիշի ուղևորատար միկրոավտոբուսով Արենի համայնքի բնակավայրերից դեպի մարզկենտրոն և հակառակ ուղղություններով անվճար կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելուն՝ բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

2. Հաստատել միկրոավտոբուսով իրականացվելիք երթուղու ժամերը և օրերը համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

3. Սահմանել ուղևորատար միկրոավտոբուսի վարորդի աշխատավարձի չափը՝ 160 000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝

ա/ հավասարության սկզբունքը պահպանելու նպատակով Աղավնաձոր -Եղեգնաձոր երթուղին սպասարկող վարորդի հետ կնքել պայմանագիր, սահմանված գրաֆիկի համաձայն օրական մեկ անգամ Աղավնաձորից Եղեգնաձոր և հակառակ ուղղությամբ բնակչությանը սպասարկել անվճար՝ ամսական վճարելով համայնքի բյուջեից 50 000 ՀՀ դրամ առանց հարկերի:

բ/ ուղևորափոխադրումների կազմակերպման համար հատկացնել դիզելային վառելիք՝ ըստ սահմանված նորմերի:

5. Սույն որոշման 1-4 կետերը իրականացնել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում, որից հետո ներկայացնել վերանայման,

6. Ապահովել պարետի որոշմամբ սահմանված համավարակի տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՅԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**Հավելված**
**Արենի համայնքի ավագանու**
**2020 թվականի հուլիսի 3-ի**
**թիվ 74 որոշման**

| Երթուղի | Մեկնարկը սկզբնական բնակավայրից | Շաբաթվա օրեր | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Երկ. | Երեք. | Չոր. | Հնգ. | Ուրբ. |
| Ելփին - Ռինդ - Չիվա - Արենի - Արփի - Եղեգնաձոր | 8:00 | | | | | |
| Եղեգնաձոր - Արփի - Արենի - Չիվա - Ռինդ - Ելփին | 18:00 | | | | | |
| Խաչիկ - Արենի - Արփի - Եղեգնաձոր | 8:00 | | | | | |
| Եղեգնաձոր - Արփի - Արենի - Խաչիկ | 18:00 | | | | | |
| Եղեգնաձոր - Ագարակաձոր | 12:00 | | | | | |
| Ագարակաձոր - Եղեգնաձոր | 13:00 | | | | | |
| Աղավնաձոր - Եղեգնաձոր | 12:00 | | | | | |
| Եղեգնաձոր - Աղավնաձոր | 14:00 | | | | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 75

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.06.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 62 և ԹԻՎ 66 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 4-ի «2020 թվականի մարտի 17-ից մայիսի 26-ը ընկած ժամանակահատվածում, նոր տեսակի կորոնավիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում, Արենի համայնքի վարչական տարածքում արտաժամյա հերթապահություն իրականացրած համայնքապետարանի աշխատակազմի և Արենի ՀՈԱԿ-ի աշխատակիցների անդամներին սահմանված դրույքաչափի 50%-ի չափով հավելավճար հատկացնելուն համաձայնություն տալու մասին» թիվ 62 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

ա) որոշման վերնագրում և բովանդակության մեջ. <<համայնքապետարանի աշխատակազմի>> բառերից հետո ավելացնել <<Ելփին բնակավայրի վարչական ղեկավարին>> բառերը, հավելավճար բառը փոխարինել պարգևավճար բառով,

բ) որոշման հավելվածից հանել 1-ին կետը. <<1. Յուսիկ Սահակյան, 430 000 ՀՀ դրամ, 215 000 ՀՀ դրամ>>,

2. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 4-ի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող էքսկավատոր-ամբարձիչը <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 66 որոշման հղման մեջ ավելացնել <<հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը>> բառերը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 76

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 0.05697ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի Մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կառավարության «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1595-Ն որոշմամբ հաստատված Արենի համայնքի Արենի բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն.

0.05697 հա ընդհանուր մակերեսով հողամասի (ծածկագիր 10-008-0184-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 77

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.16428ՀԱ և 0.15621ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թվականի թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ մասի 5-րդ կետը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.16428հա և 0.15621հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**